# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական Ավիացիայի Կոմիտեի աերոնավիգացիոն տեղեկատվության հարցերով փորձագետի կողմից 2024թ. հունվարի 23-ից մինչև 2024թ. փետրվարի 6-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում իմ կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1. ՀՀ Աերոնավիգացիոն Տեղեկատվության Ժողովածուի (այսուհետ՝ ԱՏԺ) մեջ հրապարակելու նպատակով տեղեկատվությունների մշակում և տրամադրում, մասնավորապես՝ մագնիսական շեղման նոր արժեքով պայմանավորված ազգային ԱՏԺ-ում հրատարակման ենթակա աերոնավիգացիոն տվյալները:

2. ազգային ԱՏԺ-ում հրատարակված քարտեզների աերոնավիգացիոն տվյալների ամբողջականության համեմատական վերլուծություն:

3. Ավիացիոն ոլորտի կանոնակարգման նորմատիվային փաստաթղթերի մշակման, միջազգային փաստաթղթերի տեղայնացման և գործող ազգային փաստաթղթերում լրացումներ կատարելու խորհրդատվություններ:

4. Քաղաքացիական Ավիացիայի Միջազգային Կազմակերպության (այսուհետ՝ ՔԱՄԿ) (ICAO) հավելված 4-ի՝ <<աերոնավիգացիոն քարտեզներ>> պահանջներով պայմանավորված ազգային ԱՏԺ-ում հրապարակվող աերոնավիգացիոն տեղեկատվության ամբողջականության, տվյալների որակի և արդիականության ապահովման առաջարկներ:

5. Կոմիտեի օդանավակայանների սերտիֆիկացման և օդային երթևեկության կազմակերպման վարչության հետ համատեղ մասնակցել եմ 2024թ. ընթացքում ՔԱՄԿ (ICAO) կողմից Քաղաքացիական Ավիացիայի Կոմիտեի արտաքին աուդիտի գործընթացին՝ ներկայացնելով ազգային ավիացիոն համակարգի կանոնակարգման նորմատիվ իրավական փաստաթղթերը և դրանց համապատասխանությունը միջազգային պահանջներին:

Արամ Թունյան,
Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի
աերոնավիգացիոն տեղեկատվության հարցերով փորձագետ
07.02.24թ.

Արամ Թունյանի կողմից կատարած աշխատանքները գնահատում եմ ......գերազանց......
(բավարար, լավ կամ գերազանց)

Քաղաքացիական ավիացիայի
կոմիտեի նախագահ

Միհրան Խաչատրյան